

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

47


ԿՈՆՏՐՈԼ ԱՍԻՍՏԵՆՏԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Կազմեց Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ




ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Բ Ե Վ Մ Ո — 1 9 2 9



ԿՈՆՏՐՈԼ ԱՍԻՍՏԵՆՏԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ



Կազմեց Ս. ԻՍԱՀԱԿՅԱՆ



A $\frac{III}{3048}$



ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Ե Դ Ե Գ Ե Զ — 1 9 2 9

ՊԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ
ՑԵՐԵՎԱՆՈՒՄ

Պատվեր № 591

Տիրաժ 1500

Գրառեպլար № 2143 Բ.

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայերեն լեզվով անասնապահության կոնտրոլային գործի վերաբերյալ ձեռնարկների բացակայութիւնը նկատի ունենալով, Հ. Ժ. Կ. Գյուղավարչութիւնը անհրաժեշտ է համարում հրատարակել տեղեկատու-գրքույկ կոնտրոլ ասիստենտների համար, վորը մեկ կողմից՝ կբավարարի նման ձեռնարկի պահանջը և. Հայաստանի կոնտրոլային գործի զարգացման համար յեւ մյուս կողմից՝ հենց գործի սկզբից միասնական կազմակերպչական ձեւ յեւ հաշվետվութիւն կստեղծի:

Հ. Ժ. Կ. Գյուղավարչութիւնն անհրաժեշտ է համարում նշել, վոր կոնտրոլային գործի կազմակերպման սկզբունքային խնդրում նա հիմք է ընդունում ամբողջ Միութեան սահմաններում կոնտրոլային գործի կազմակերպչական ձեւի յեւ հաշվետվութեան միասնականութիւնը պահպանած լինելու նպատակով, և. Ռուսաստանի (РСФСР) Հողփողկոմատի ընդունած սկզբունքները, համաձայն կոնտրոլ. գործի վերաբերյալ տեղի ունեցած 1 յեւ 11 խորհրդակցութիւնների վորոշումների:

Գյուղավարչութեան

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Գյուղացիական կաթնատնտեսության վերակազմակերպման պրոցեսսում կիրառվող զոոտեխնիքական ձեռնարկումների շարքում ամենակազմակերպողից մեկը՝ հանդիսանում է կոնտրոլ-ընկերությունների կազմակերպումը:

Կոնտրոլ-ընկերություններն ստեղծվելով Դանիալում (առաջին կոնտրոլ-ընկերությունը կազմակերպվել է 1895 թ.), սկսվեցին արագ կերպով տարածվել համարյա բոլոր այն լեռներում, վարանդ կաթնատնտեսության զարգացմանը մեծ ուշադրություն եր դարձվում:

Ռուսաստանում առաջին կոնտրոլ-ընկերությունը կազմակերպվել է 1905 թվին, իսկ 1926—27 թվին նրանց թիվը հասել էր արդեն 798-ի:

Անդրկովկասում մինչև խորհրդայնացումը կոնտրոլ-ընկերություններ չկային:

Կոնտրոլ-ընկերությունների հիմնական նպատակն է՝ կազմակերպել արդյունաբեր կաթնատնտեսություն:

Հիշյալ ինդիքը լուծող հիմնական դեմքը հանդիսանում է կոնտրոլ-ասիստենտը՝ ռացիոնալ կերակրման, խնամքի և կաթի արտադրանքի հաշվառման միջոցով:

Գյուղացիական տնտեսություններն իրենց հետ անմիջականորեն կապված կոնտրոլ-ասիստենտի միջոցով սովորում և իրենց տնտեսության մեջ կիրառում են գործնականորեն իրագործելի բոլոր անասնապահական ձևերը՝ կաթի արտադրությունը բարձրացնելու համար:

Վոր իսկապես կոնտրոլ-ընկերությունների միջոցով կարելի չէ բարձրացնել կաթի արտադրությունը, յերևում է հետևյալ ամյայններից.—

Շ Ր Զ ա ն	Տարիները	Կովերի թիվը	Միջին հաշվով 1 կովից տարեկան		
			կ ա թ կիլ.	ձարակի %	ձարակ կիլ.
Ռբբինկսի կաթնատնտեսական միություն	1925/26	431	2117	4,15	57,86
	1926/27	775	2717	4,2	114,24
			+600	+0,05	+26,35

Ծ. Հայաստանում կոնտրոլային գործը նոր է սկսվում: Ըստ Հ. Ժ. Կ-ի պլանի, այդ առաջին հերթին պետք է սկսվի արդյունաբերական կաթնա-

տնտեսական շրջաններում, նպաստելով այդ շրջանների կաթնատնտեսության վերականգնութանը—հիսպորտային շվեյցարական պանրի արտադրանքի ավելացման ուղղութիւնով:

Այդ շրջաններում կոնտրոլ-ընկերութիւնները պետք է կազմակերպվեն կոոպկազմակերպութիւնների ստորին ցանցին (կաթնարտաներին) կից, վորոնց շուրջն էլ կենտրոնացվում են ազրո-զոոտեխնիքական ձեռնարկումների կոմպլեքսը:

Ազրո-զոոտեխնիքական աշխատանքների խորացման ղուղընթաց, ստորին ցանցի ներսում և շուրջը կազմակերպվում են կոոպերատիվ-կոլեկտիվ միութիւններ, վորոնք դեպի այդ զոոտեխնիքական բույնը կներգրավին գյուղացիական նոր տնտեսութիւններ: Խորացրած զոոտեխնիքական աշխատանքի հետեանքով այդ բները պետք է դառնան բարձր արտադրողականութիւն տոնմացու տավարի աղբուր, այգիսիք, ավելի յետ մնացած շրջաններին մատակարարելու համար:

Այսպիսով, կոնտրոլ-ընկերութիւնների աշխատանքի լերկորդ արդյունքը հանդիսանում է կաթնատու նախրի կատարելագործումը և նրանցից բարձրարժեք տոնմացու անասուն ստեղծելը:

Կոնտրոլային գործի հիմքը դնելու համար Հ. Ժ. Կ.-ը և Պանիր-Յուդ Կենտրոնը միասին, գյուղերիտ և գյուղատնտեսական դպրոցներ ու տեխնիկումն ավարտածներից պատրաստել են կոնտրոլ ասիստանտների մի կադր, վորոնք արդեն անցել են գործնական աշխատանքի:

Լուս ընծավորդ այս «Տեղեկատուլի» նպատակն է ոգնել այդ կադրին: «Տեղեկատուն» պետք է լրացվի տարեց-տարի, կոնտրոլ-միութիւններում տարվող ամենորլտ աշխատանքերի ժամանակ:

«Տեղեկատուն» կազմելիս հիմք է ընդունված Ս. Ռուսաստ. Յուդմիութիւն կենտրոնի կողմից ընդունված և հրատարակված «Техническая Инструкция для контроль-ассистента» գրքույկը, վորի մեջ, «Տեղեկատուն» կազմելիս, կատարված են մի շարք եական փոփոխութիւններ և լրացումներ, նկատի ունենալով տեղական պայմաններն ու պահանջները: Յուդկենտրոնի կողմից ընդունված վարսակային կերի միավորը փոխարինված է դարու միավորով՝ ըստ Հանսոնի, համաձայն Ս. Հայաստանի Հողփողկոմատին կից անասնաբուժական կոմիտեյի վորոշման, և վորպես ավելի մատչելի մեր գյուղացիական մասսաներին:

«Տեղեկատուլի» մեջ կատարված հետեյալ փոփոխութիւնն այն է, վոր նորմալ, առաջին և լերկորդ ծին կովերի համար կլմելու մինիմալ տեղողութիւնը սահմանված է 7 ամիս կոնտրոլ. տարվա ընթացքում (փոխանակ 8-ի, վորն ընդունված է Յուդկենտրոնի կողմից), նկատի ունենալով տեղական կովերի լակտացիայի կարճատեութիւնը:

Լրացումներ վերաբերում են զլխավորապիս կերակրման, դաստիարակման և կերարածինների տնտեսական դնահատման ձեերին:

Ներկա «Տեղեկատուն» կազմելիս, բացի Յուդկենտրոնի հիշյալ գրքույկից, ոգտագործված են նաև հետեյալ գրքերը. 1. А. Митропольская—«Контрольные Т-ва в молочном скотоводстве, их организация и ведение, 2. Ларс Фредериксен—«Расчет зимнего корма для молочного скота» և 3. Христенсен—«Учение о контроле».

ԿՈՆՏՐՈԼ-ԱՍԻՍՏԵՆՏԻ ՏԵԽՆԻԲԱԿԱՆ ՀՐԱՅԱՆԳ

ԿՈՆՏՐՈԼ-ԱՍԻՍՏԵՆՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոնտրոլ-ասիստենտի պարտականությունն է՝

1. Կատարել կոնտրոլի լենթակա յուրաքանչյուր կողմի արտադրողականության ճիշտ հաշվառումը.

2. Հաջողացնել նորմալով կերակրելը.

3. Հետևել, վոր կողերին ժամանակին և կանոնավոր զուգավորեն և ցամաքացնեն (աշխատել, վոր կողի ծնունդը կատարվի ամենաձեռնառու ժամանակը, նկատի առնելով կաթի վաճառման պայմանները և կերերի պաշարը).

4. Կատարել կաթնատու տավարի խոտանում և նախիրի ընտրություն՝ արտադրականության հաշվառման տվյալներին հիման վրա.

5. Հետևել ընկերության կամ կոնտրոլ-սեկցիային պատկանող բոլոր ցուլերի պահվածքին ու ոգտագործմանը. ղեկավարել նրանց ճիշտ կերակրումն ու զուգավորումը, և ցուլեր պահող տնտեսություններն այցելելիս ժամանակին բոլոր տեղեկությունները մտցնել որագրի և կայանում գտնվող հաշվառման տետրի մեջ՝ ղեկավարվելով Պանիր-Յուդ Կենտրոնի հրահանգներով.

6. Աջակցել, վոր ընկերության (սեկցիայի) անդամները կանոնավոր դաստիարակեն իրենց հորթերին, ճիշտ կերակրեն ու պահեն: Կազմակերպել հորթերի մեծածման մրցումներ, այս դեպքում առաջնորդվելով հատուկ հրահանգներով.

7. Զգտել բարելավելու տավարի պահվածքը (գոմը լուսավոր և բարելավ դարձնել, աացիոնալ գոմեր կառուցել).

8. Մտցնել սահմանված ձևով բարեխիղճ կոնտրոլային հաշվապահություն.

9. Ճիշտ կերպով գրանցումներ կատարել տոմսական գրքերում, լեթի ալգախիք կան.

10. Սահմանված ձևով ժամանակին հաշվետվություն ներկայացնել.

11. Աջակցել և մասնակցել ուրիշ զոտոտեխնիքական ձեռնարկումներին, ինչպես որինակ՝ ցուցահանդեսների, ցուցադրումների, տարեկան մրցումներին, կոլեկտիվ նախիրների կազմակերպման և այլն:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՆՏՐՈԼԸ

Արտադրականության հաշվառման ժամանակ վորոշում են կիթը, նրա ճարպի % -ը և որվա կերցված կերի քանակը:

1. Արտադրականութեան հաշվառման ժամանակ կոնտրոլի լինթակա տնտեսութիւնը պիտի այցելել ամիսը մեկ անգամից վոչ պակաս: Տարբեր այցելութիւններն միշտ ընկնող ժամանակամիջոցները պետք է մոտավորապէս իրար հաժմասար լինեն: Այցելութեան ժամկետը տնտեսութեանը հաշտնի չպետք է լինի:

2. Այցելութեան ժամանակը հարմարեցվում է տավարի լերեկոյան կերակրմանն ու կթելուն, և տեղում է մի ամբողջ օր:

3. Այցելութեան ժամանակ կոնտրոլ-ասիստենտը անձամբ ներկա չէ լինում բոլոր նոյնի կթելուն:

4. Կիթերը կշռվում են մինչև 0,1 կիլ. ճշտութեամբ:

5. Նոր ծնած կովերի կիթերը կշռվում են վոչ շուտ, քան ծնելուց 3 օր հետո:

6. Կաթի ճարպի $\frac{1}{10}$ -ը վորոշելու համար լուրաքանչյուր կովի լուրաքանչյուր կիթից, առանձին կշռելուց հետո, ուղղակի կաթնամանից վերցնում են կաթի նմուշը: Ծնելուց հետո նմուշ վերցվում է 8 օրից վոչ շուտ:

7. Յուրաքանչյուր կովի ամբողջ օրվա կաթի միջին նմուշն ստանալու համար անհրաժեշտ է կաթը խնամքով խառնել և վերցնել չափաբաժանով կամ կիլո-պիպետով կիթին համապատասխան քանակով, այսինքն՝ որական կիթի լուրաքանչյուր կիլոից վորոշ քանակութեան խոր. սանտ. կաթ: Նմուշը վերցնում են այսպէս. լինթագրենք կովի կիթը որական 15 կիլ. և, հետևաբար անհրաժեշտ քանակութեան նմուշ ստանալու համար պետք է ամեն մի կիլոգրամ կաթից վերցնել 3 խ. ս., կամ ամեն մի կիթից հետևյալ քանակութեամբ.

Առավոտյան կիթը—6 կիլ. —նմուշ 18 խ. ս. կաթ.

Կետրին՝ » —4 » — » 12 »

Յերեկոյան՝ » —5 » — » 15 »

Ամբողջ օրը՝ 15 կիլ. —նմուշ 45 խ. ս. կաթ.

8. Վորպենդի շոգ ժամանակ կաթի նմուշը չփչանա, խորհուրդ են տալիս նմուշի մեջ լցնել 2 կաթիլ ֆորմալինի 40 $\frac{1}{10}$ -ալին լուծուկով:

Անալիզից առաջ պետք է կաթը տաքացնել և խնամքով խառնել: Նմուշները պահվում են կոնտրոլ-ասիստենտի մոտ՝ հով տեղում:

9. Ծառայի $\frac{1}{10}$ -ի վորոշումը կատարվում է Դերբերի թթվային յեղանակով:

10. Աշխատանքից հետո բոլոր գործիչները՝ պիպետները, բուսիրտները, շէրը և այլն խնամքով պետք է լվացվեն և չորացվեն:

11. Կերակրելու ժամանակ կոնտրոլ-ասիստենտը կշռում է ամեն մի կովին արվող կերը:

Կերցվող կերի ծախսի ավելի ճիշտ հաշվառում կատարելու համար անհրաժեշտ է աշխատել, վոր կոնտրոլի լինթակա լուրաքանչյուր տնտեսութիւն ունենա այնպիսի մսուրներ, վորոնցից կերը հեշտութեամբ չթափվի և չփչանա:

12. Կերերը կշռելուն զուգընթաց վորոշվում է նրանց անհրաժեշտ կերի միավորներով:

13. Կերի միավորը հաժմասար է 1 կիլ. դարու: Ոգտվելու համար «Տեղեկատու» մեջ տրվում է Հաստի աղյուսակը, Յեթի վորեն շրջանի տե-

դական կերերի համար կան փորձնական կայանները անալիզները տվալներ, ապա կոնտրոլ-ասխատեսները կարող են ողջովել այդ տվյալներին անմիջականորեն ղեկավարող կազմակերպության թուլությունները:

14. Յուրաքանչյուր տարի, նախքան դոմային պահվածքին անցնելը, կոնտրոլ-ասխատեսները տնտեսաառերը հետ միասին պարզում են կերերի գոմային կերակրման ամբողջ պաշարը շրջանի համար, հաշվում են կենդանուն անհրաժեշտ լուրաքանչյուր տեսակի կերի քանակը, ցույց են տալիս ձեռք բերելիք կերի քանակը, կերերի նախահաշիվը մտցվում են «հաշվառման տետրակում» և ընկերության միացյալ կերի պլանում: Յուրաքանչյուր տնտեսությունում կերի հաշիվը պարզելիս անհրաժեշտ են նկատի ունենալ տնտեսությունում բոլոր առանձնահատկությունները, որինակ՝ ձիու սնունդը, աշխատանքի ընդունելը, արգելք տարին բոլոր կապած են կերակրվում, թե՛ միայն ձմռանը և այլն:

ՆՈՐՄԱՅՈՎ. ԿԵՐԱԿՐԵԼԸ

15. Որական կիթը պարզելուց հետո կոնտրոլ-ասխատեսներն ամեն մի կովին համար կազմում են հետևյալ ժամանակաշրջանի որական կերարաժեշտը, նկատի առնելով կովի ծնելու ժամանակը, կենդանի քաշը, կերերի պաշարն ու արժեքը և այլն: Ռացիոներ պետք են կազմված լինի այնպես, վոր հնարավորություն տա կովին իր արտադրական ընդունակությունը լրիվ կերպով ցուցահանելու: խորհրդային և կոլեկտիվ տնտեսություններում կարելի չեն կերառել լսմբական կերակրում:

Ռացիոներ կազմվում են դարու կերի միավորներով՝ համաձայն գրքում արված սխեմայի:

16. Արտոի կերի միավորները և սպիտակուցի չափը վորոշվում են թեորհալի հաշիվներով, նկատի ունենալով կովի կենդանի քաշը և կաթի քանակը:

Մեկ որվա արտոի սննդարժեքը բազմապատկվում են արտադրանի շրջանի որերի թվով: Յեթե արածելու շրջանում լրացուցիչ կեր են ստանում գոմում, այդ կերի սննդարժեքը՝ արտահատված կերի միավորներով և սպիտակուցով՝ դուրս են հանվում արտոի ընդհանուր սննդարժեքից:

17. Կենդանի քաշի վորոշումն ըստ Կլուվեր-Շտրաուսի կատարվում են տարեկան 2 անգամ՝ կոնտրոլային շրջանի ընթացքում, մեկը աշնանը՝ դոմային պահվածքին անցնելիս, մեկն էլ գարնանը՝ առաջին անգամ արտո դուրս հանելիս:

ՈՐԱԳԻՐ ՊԱՆԵԼԸ

18. Կովերի կիթերի և կերակրման վերաբերյալ տվյալները, այլև ուրիշ տեղեկությունները պետք են իսկույն ևեթ քիմիական մատիտով գրվեն կոնտրոլ-ասխատեսների որագրի մեջ: Որագրի «կոնտրոլ» որը իսկապես տնտեսությունում մեկ արվում ենք սլոնյակը լրացնելիս մտցվում են կոնտրոլ որվա կերերի ծախսը կիլոգրամներով և կերի միավորներով՝ մինչև 0,1 կիլոգրամ թյամբ:

19. Այն դեպքում, յերբ տնտեսաառերը ցուցմունքներով, հետևյալ որվա համար սահմանված կերարաժեշտը չի կերառվել ամբողջ կոնտրոլային

Ժամանակաշրջանի ընթացքում և տեղի չի ունեցել այս կամ այն փոփոխութիւններ, կոնտրոլ-ասիստենտը, չեթե հաճատում և տնտեսատիրոջ ասածներին, որագործի համապատասխան սյուսնակում նշանակում և կոտորակի ձևով, վորտեղ իբրև համարիչ գրվում և կերի քաշը, վորը վորոշված և կոնտրոլի որը, իսկ հայտարար՝ ամբողջ Ժամանակաշրջանի կերերի քաշը, հաշվելով տնտեսատիրոջ ցուցմունքները:

20. Որագործի «հետևյալ շրջանի համար նշանակված կերաբաժինը» յերեսում անաշխատան գրվում և հանձնարարված կերաբաժինը «նորմա» սյունակում գրվում և կերի միավորների և սպիտակուցների քանակը, վորն անհրաժեշտ և տվյալ կովի՝ կենդանի քաշի և կիթի համար: Յեթե տնտեսութեան մեջ կերակրումը ճիշտ և տարվում, փաստական կերաբաժինը պետք և նորմային հավասար լինի:

ՏՆՏԵՍԱՏԻՐՈՋ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԸ

21. Գոնտրոլ-ասիստենտը պետք և սովորեցնի տնտեսատիրոջը, վոր նա գրանցումներ կատարի արտագրողականութեան հաշվառման տետրակի մեջ: Միևուրեք տետրակում կոնտրոլ-ասիստենտը համապատասխան յերեսում իր ստորագրութեամբ մտցնում և կոնտրոլի տվյալները և անդեկտիվները գլխավոր մատյանից: Այդ բանը անհրաժեշտ և խիստ կերպով կատարել՝ տնտեսատիրոջ և կոնտրոլ-ասիստենտի միջև ծագող թյուրմացութիւններից խուսափելու համար: Յեթե կոնտրոլ-ասիստենտի գրանցումները խիստ տարբերվում են տնտեսատիրոջ գրանցումներից, պետք և պարզել գրապատճառը:

22. Որագործում գրի առնված բոլոր տվյալները գրանցվում են գլխավոր մատյանում, և վորպեսզի այդ աշխատանքը բաշխվի հավասար Ժամանակամիջոցների վրա, պետք և գրանցումները կատարել մատյանի մեջ իսկուր և եթե՝ տնտեսութեան կոնտրոլը վերջացնելուց հետո: Պետք և իբրև կանոն ընդունել, վոր տնտեսութեան կոնտրոլային հաշվառումը համարվում և վերջացած միայն այն Ժամանակ, յերբ տնտեսութեան վերաբերյալ բոլոր տվյալները գրապված են գլխավոր մատյանում:

ԳԼԽԱՎՈՐ ՄԱՏՅԱՆ ՊԱՇԵԼԸ

23. Որագործի և գլխավոր մատյանի բոլոր վերնագրերը (տիրոջ ազդանունը, կովի անունը, մայրը, հայրը և այլն) լրացվում են մանրամասնորեն. այսպես՝ տիրոջ ազդանունը վերնագրի տակ գրվում և անունը, հայր-անունը և ազգանունը: Յուրաքանչյուր կով, վոր կոնտրոլի տակ և տանվում, տանում և իր ձեռք, վորը նսում և նրա վրա մինչև կյանքի վերջը: Թյուրմացութիւններից խուսափելու համար այս կամ այն պատճառով կոնտրոլից դուրս յեկած կովի ձեռք մեկ ուրիշին չի տրվում:

24. Գոնտրոլային Ժամանակաշրջանի սկզբում գլխավոր մատյանում վորոշվում և յերկու կոնտրոլների միջև ընկած որերի թիվը: Յեթե ամիսը մեկ անգամ և կոնտրոլ կատարվում, այդ դեպքում կոնտրոլային Ժամանակաշրջանը հավասար կլինի որացուցային ամսին: Ժամանակաշրջանի ընթացքում լեղած կիթերի քանակը պարզելու համար Ժամանակաշրջանի սկզբի և վերջի որական կիթերը գումարվում են և գումարը քաժանվում

և 2-ի. ստացված թիվը բազմապատկվում է ժամանակաշրջանի որերի թվով. որինակ՝

Ժամանակաշրջանի սկիզբը—12 կիլ.

» վերջը—10 »

կունենանք —22 կիլ.

Բաժանելով 22-ը 2-ի վրա, կստանանք 11 կիլոգր. զա կլինի ժամանակաշրջանի միջին որական կիթը: Բազմապատկելով 11 կիլ. ժամանակաշրջանի որերի թվով, լինթադրենք 28-ով, կստանանք ժամանակաշրջանի ամբողջ կաթի քանակը՝ հավասար 308 կիլոգրամի:

25. Կոնտրոլային ժամանակաշրջանի տեղում թվում են հաշվետու տարվա սկզբին և վերջին՝ կլինի սովորականից կարճ և տարբեր կենդանիների համար տարբեր տևողությամբ: Հաշվետու տարվա վերջում վերջին այցելության ժամանակ զրանցված կիթերի և կերերի քանակը պետք է հաշվել, վոր վերաբերում են թե՛ հաշվետու տարվա կոնտրոլային ժամանակաշրջանի վերջին և թե՛ հետևյալ տարվա կոնտրոլային ժամանակաշրջանի սկզբին: Յնթադրենք, վոր հաշվետու տարում վերջին կոնտրոլը չեղել և սեպտեմբերի 13-ին և ալդ որվան կիթը լեղել և 4 կիլոգրամ, իսկ հետևյալ տարվա առաջին կոնտրոլը հոկտեմբերի 13-ին և կիթը լեղել և 3 կիլոգրամ: Անցյալ տարվա վերջին կոնտրոլային ժամանակաշրջանը կլինի 30—13=17 որ. իսկ նոր տարվա առաջին կոնտրոլային ժամանակաշրջանը կլինի 13 որ: Ժամանակաշրջանի միջին կիթը կլինի $4+3=7:2=3\frac{1}{2}$ կիլոգրամ:

26. Ժամանակաշրջանի ընթացքում ստացված մեկ տոկոսանի կաթի քանակը պարզելու համար այսպես են անում. ժամանակաշրջանի սկզբի որական կիթը 10 կիլ. $4,00\%$ ճարպով որական տալիս և $10 \times 4,0 = 40,0$ կիլոգր. 1% կաթ. ժամանակաշրջանի վերջի որական կիթը 12 կիլ. $3,80\%$ ճարպով կտա՝ $12 \times 3,8 = 45,6$ կիլ. 1% կաթ, իսկ ընդամենը $40 \times 45,6 = 85,6$ կիլ., վորը բաժանելով 2-ի, կստանանք 42,8 կիլ. 1% կաթ մեկ որում, իսկ ամբողջ ժամանակաշրջանում՝ $42,8 \times 28 = 1198$ կիլ. ստորակետով 2 թվանշան զատելով (100-ի բաժանելով) կստանանք ժամանակաշրջանի ամբողջ ճարպի քանակը 11,98: Ծարպի միջին $\%$ -ը ստանալու համար 1% կաթի քանակությունը, 1198 կիլ. բաժանվում է ամբողջ ժամանակաշրջանի կիթերի վրա, այսինքն՝ 308-ի, և ստացվում է 3,889, վորը կլուսացնելով կստանանք ճարպի միջին $\%$ -ը—3,89:

27. Գովի ծնելուց սկսած կոնտրոլային ժամանակաշրջանի կաթի և ճարպի քանակությունը պարզվում է մոտակա կոնտրոլային վորուման կիթը բազմապատկելով կիթի որերի թվով: Գովի ցամաքելուց առաջ կիթը հաշվվում է մինչև այն որը, չերը կոմն որական մի անգամ և կիթվում է ստվորում վերջին կիթի որ ժամանակաշրջանի կաթի քանակությունը հաշվելու համար ցամաքեցնելու որվա կիթը վերցվում է տնտեսատիրոջ գրանցումներին:

28. Ժամանակաշրջանի ընթացքում կերցված կերի քանակը պարզվում է որական կերաբաժինը ժամանակաշրջանի որերով բազմապատկելով:

Այն դեպքում, չերը կոնտրոլային ժամանակաշրջանի ընթացքում կերաբաժինները փոփոխություն չեն չերթարկվել և տնտեսատիրոջ ցուցմունքներին կարելի չե հավատար, կոնտրոլատիստները որադրից զլխավոր

մատյանի մեջ և անցկացնում կոտորակի հայտաբարները, վորոնք գրված են «կերի կշիռը կոնարովի որը» սյունյակում (տես § 19):

29. Ժամանակաշրջանի ընթացքում ստացված կաթի դրամական գնահատումը կատարվում է Պանիր-Յուզ գործարանների գներով, համապատասխան ընդունված հաշվի միավորի, այսինքն՝ 1 կիլոգրամ կաթի գինը, 1 կիլոգր. ճարպի գինը, կամ կիլոտոկոսի գինը: Ծանոթության մեջ գրվում է թե հաշվի լինչ միավորով են ոգտվում:

Յեթե քաշած կաթը վերադարձվում է կաթ բերողներին, անհրաժեշտ է կաթի դրամական գնահատման ժամանակ կաթի պանրագործարանի գներն ազելացնել քաշած կաթի գինը մեկ միավորի հաշվով: Այն ամիսներին, յերբ գործարանը չի աշխատում, կաթի գինը վորոշվում է շուկայի միջին գներով:

Յեթե հնարավոր չէ կաթի լրացուցիչ վճարը վորոշել, գները ցույց են տրվում առանց լրացուցիչ վճարի, բայց այդ մասին անում են համապատասխան նկատողություն:

30. Կոնարովային ժամանակաշրջանում կերցված կերի արժեքը հաշվում են տեղական շուկայի գներով:

31. Արոտի դրամական գնահատումը կատարվում է արոտային շրջանում փաստորեն կատարված ծախսերի հիման վրա, այն է՝ արոտի կապալավարձ, նախարպահի վարձատրություն և այլ ծախսեր: Արոտի արժեքը դուրս է բերվում ամբողջ արոտային ժամանակաշրջանի համար:

32. Յուզի քանակությունը վորոշելու համար ոգտագործում են այս ֆորմուլան. լուղի քանակը = $\frac{\text{կաթի քանակ} \times (\text{ճարպի } \%) - 0,3}{85}$

յուղի քանակը վորոշվում է մինչև 0,01 կիլոգր. ճշտությամբ:

33. Տարվա գումարներն ստացվում են ուղղահայաց սյունյակների բոլոր թվերը գումարելով, բացառությամբ 3 և 4 սյունյակների (որվա կիթը և ճարպի տոկոսը), վորոնց վոշ թե գումարը, այլ միջին թիֆն է վորոշվում: Վորպեսզի ստացվի միջին որական կիթը, որինակ, տարվա ընթացքում, պետք է տարվա կաթի քանակը բաժանել տարվա որերի վրա:

Ճարպի միջին $\%$ -ը տարվա ընթացքում դուրս է բերվում 1% կաթի քանակը տարեկան անարատ կաթի քանակի վրա բաժանելով:

34. 100 կերի միավորի կերոգտագործումը հաշվելու համար ոգտվում են հետևյալ ֆորմուլայով:

$$100 \text{ կերի միավ. ոգտագործ.} = \frac{\text{կաթի քանակ} \times 100}{\text{կերի միավ. քանակը}}$$

35. Տնտեսության մեկ կիլոգրամ կաթի ինքնարժեքը վորոշելու համար նկատի լն առնվում միայն կերի ծախսը:

ՀԱՇՎԵՏՎՈՒՔՅՈՒՆ

36. Կոնարով-ախտեսնող հաշվետու յի ընկերության կամ կաթնարանի վարչության առաջ տարեկան մեկ անգամ՝ վոշ ուշ նոյեմբերի 15-ին, իսկ ընկերության կամ կաթնարանի վարչությանը Պանիր-Յուզ Կենտրոնի առաջ, յիթե մտնում է նրա ցանցի մեջ, և հողորգանների առաջ, յիթե ընկերությանը չի մտնում Պանիր-Յուզ Կենտրոնի ցանցի մեջ:

Ամբողջ նախքի տարեկան միջին գումարները, բայց վոշ տոանձին

կովերի, այլև ընդհանուր տեղեկութիւններ կոնսուլ միաթիւան կամ սեկցիայի մասին միաժամանակ տրվում են շրջանալին դուռլաւանտսին:

37. Տարեկան հաշվետւթիւնը հաշվվում է հոկտեմբերի մեկից մինչև հետևյալ տարվա սեպտեմբերի 30-ը և պարունակում է հետևյալը. 1. տեղեկադիր տարեկան գումարները, 2. հաշվետվութիւնը ըստ քարտի, 3. արտադրողների ցուցակը, 4. տարեկան գումարներ մատղաշներին վերաբերյալ:

38. «Տարեկան գումարները» բլանկի մեջ սկզբում մտցնում են նորմալ կովերը, ըստ առանձին սյունյակներին դուրս և բերվում նրանց գումարները և միջինը 1 կովի համար: Մի քիչ ներքև գրվում են առաջին ծին կովերը և նրանց գումարներն ու միջինը նույնպէս դուրս են բերվում, ապա լերկորդ ծին կովերը և նույնպէս գումարներն ու միջինը:

Այդ բաժիններից լուրագրանշուրի մեջ կովերը մտցվում են ճարպի քանակի նմադման կարգով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Նորմալ տարեկան կովեր են համարվում այն կովերը, վորոնք կոնսուլին տակ են լեղել ամբողջ հաշվետու տարին և 3 ծինից պակաս չեն, ըստ վորում 3-րդ ծինը արտի տեղի ունեցած լինի հաշվետու տարվա 7-րդ ամսից վոչ ուշ, և վորոնք կթվեն 7-ամսից վոչ պակաս:

39. Մեկ նորմալ կովի միջին տվյալները դուրս բերելիս անհրաժեշտ է առանձին սյունյակներին գումարները բաժանել նորմալ կովերի թվի վրա: Իսկ ճարպի միջին տոկ-ը վորոշվում է ամբողջ մեկ տոկոսանի կաթի քանակը նորմալ կաթի քանակի վրա բաժանելով: Կերպտագործումն ըստ կաթի և ըստ ճարպի դուրս են բերվում նույնպէս բոլոր նորմալ կովերի կաթի քանակը 100-ով բազմապատկելով և ստացածը բաժանելով ամբողջ նախրին կերպված կերի միավորների քանակի վրա: Նույնպէս ամբողջ նախրի գումարների հիման վրա դուրս են բերվում միջին կովի 1 կիլոգրամ կաթի ինքնարժեքը:

ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՇՎՈՒՄՆԵՐԻ ՃՏՈՒԹՅՈՒՆԸ

40. Վորոշումներն ու հաշվումները կատարվում են հետևյալ ճշտութեամբ՝

1. Որագրի մեջ բոլոր տվյալները գրանցվում են մինչև 0,1 կիլ. ճշտութեամբ:

II. Գլխավոր մատյանի մեջ ըստ ժամանակաշրջանների ա) կովիտ. հյուլթալի, կանաչ կերերը, բոլոր կերերի կերի միավորները, կաթը, մեկ թուկոսանի կաթը մինչև 1,0 կիլոգ. ճշտութեամբ. բ) ուժեղ կերի քաշը, ամբողջ սպիտակուցի քանակութիւնը կերերի մեջ, ճարպի տոկ-ը մինչև 0,1 կիլ. ճշտութեամբ, գ) տարեկան գումարներում. բոլոր տվյալները մինչև մեկ միավորի ճշտութեամբ՝ բացառութեամբ տարեկան ճարպի քանակի, ճարպի միջին տոկ-ի, կերոգտագործումն ըստ ճարպի, վորոնք դուրս են բերվում մինչև 0,01 ճշտութեամբ, իսկ մեկ կիլոգրամ կաթի ինքնարժեքը դուրս են բերվում մինչև 0,1 կիլոգ. ճշտութեամբ:

ԿՈՆՏՐՈՒԱՍԻՍՏԵՆՏՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆԲԸ

41. Կոնսուլ-ասիստենտը պարբերաբար ղեկուցներ է կարդում ընկերութիւն կամ սեկցիայի անդամների ընդհանուր ժողովում՝ հաղորդելով

նրանց իր աշխատանքի ընթացքում պատահած հետաքրքիր դեպքերը, ինչպես և պակասությունները և նրանց վերացնելու ճանապարհները:

42. Առանձնապես պատասխանատու աշխատանք է կոնսրու-ասիստենտի համար տարեկան ժողով գումարելը, վորտեղ մանրամասն քննվում են ընկերության աշխատանքի տարեկան արդյունքները և հետևյալ տարվա աշխատանքի պլանը:

43. Տարեկան հաշվետվությունը և աշխատանքների պլանը նախապես ներկայացվում է ընկերության կամ արտելի վարչությանն ի հաստատություն և դրանից հետո դրվում է անդամների ընդհանուր ժողովի քննությանն ու հաստատությանը:

44. Հաշվետվությունները պահվում են ընկերության կամ արտելի դրածերում: Հաշվետվության պատճենը, կոնսրու-ասիստենտի և ընկերության կամ արտելի վարչության նախագահի ստորագրությամբ, ուղարկվում է Պանիր-Յուզ Կենտրոն ղեկավարների 15-ից վոչ ուշ:

45. Ցանկալի յե կոնսրուլային աշխատանքի տվյալները ժողովրդին հասկանալի և համառոտ ձևով կախել կոոպերատիվների, շրջգործկոմիների շենքերի պատերին:

46. Կոնսրուլ-ասիստենտը մեծ ուշադրություն պետք է դարձնի վերացնելու զեղչկուհիների գյուղատնտեսական անգրագիտությունը, վորից և կախված է տնտեսության մեջ կիրառվող այս կամ այն բարելավման հաջողությունը: Դրա համար պարբերաբար կազմակերպվում են ցուցադրական ձեռնարկումներ կթելու, հորթների մեծացման վերաբերյալ և դանադան մըրցումներ կանանց ակտիվի մասնակցությամբ:

47. Հասարակական աշխատանքներին ուշադրություն դարձնելով, կոնսրուլ-ասիստենտը չպետք է մոռանա, վոր իր հիմնական աշխատանքը կոնսրուլն է և ամեն մի ուրիշ աշխատանք կարող է տանել այն սահմաններում, վոր չխանգարվեն իր ամիջական պարտականությունները:

**ՀԻՄԱԿԱՆԳ ԿՈՆՏՐՈՒ-ԱՆԱՄՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԳՐԱՄԱԿԱՆ ՀԱՅԻՎՆԵՐԸ ՊԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՅՎԵՅՎՈՒԹՅՈՒՆ
ԿԱԶՄԵԼՈՒ ՄԵՍԻՆ**

Ա. ՊԱՐԶԱՅՐԱԾ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

1 ԸՅԳԻՊԱՅՈՒՄ ԳՈՒՅՄՈՒԾՔՆԵՐ

1. Բացի կոնտրոլ-ասիստենտի հատուկ հաշվետվությունից, վորդյ նա հաշվառման և լինթարկում իր կատարած ձեռնարկումները, կոնտրոլ-անասնարուծակա՞ն ընկերությունը պետք է տանի նաև վոչ բարդ հաշվապահություն՝ արժեքների դրամական հաշվառման նպատակով:

2. Ընկերության պարզ ընթացիկ հաշվապահության ծավալը կախված է արժեքների աճի տեսակներից, վորոնք կան ընկերության տնտեսական գործունեություն մեջ: Այդ արժեքները հետևյալներն են. ա) մեուլալ ինվենտար և գույք, բ) կենդանի ինվենտար, գ) կանխիկ դրամ, դ) կերեր և այլ մթերքներ: Այսպիսով, պարզ հաշվապահության խնդիրը պետք է լինի՝ արժեքների հաշվառումը: Դրա համար պետք է ունենալ 3 հիմնական մատյան՝ 1. ինվենտարի, 2. դրամարկղի և 3. մթերքների համար:

3. Գրանցումները պետք է կատարել աճպես, վոր նրանցից պարզ յեռևա, թե ընկերության վճի ձեռնարկության հաշվին է կատարված արժեքները այս կամ այն ծախսը և կամ վճի ձեռնարկության համար է ստացված այս կամ այն արժեքը:

4. Դրա համար պետք է մատչաններում (դրամարկղի և մթերքների) ալև փաստաթղթերի մեջ գրանցելիս ցույց տալ, թե այս կամ այն արժեքը վճի ձեռնարկության հաշվին են ստացված կամ ծախսված: Գոյություն ունեցող ընկերությունները մոտավորապես ունենում են հետևյալ ձեռնարկումները. ա) կոնտրոլ-ասիստենտական կայան, բ) խողերի սոհմաբուծության, գ) բեղմնակայան, դ) փորձա-ցուցադրական ցանքներ, չե) մեքենաների վարձակետ, չ) ուժեղ կերերի և սերմերի մատակարարում (մթերքներ և կերեր) և այլն:

5. Յեթե ընկերությունն առաջին տարին չե, վոր աշխատում է, ապա նա պետք է ունենա հաշվեկշիռ (կամ լրիվ ինվենտար) անցած տարվա վերջին: Այդ նույն հաշվեկշիռը հանդիսանում է ընթացիկ տարվա սկզբի հաշվեկշիռը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յեթե հեռանում են անձավորություններ, վորոնց անդրինության տակ գտնվում են արժեքներ՝ փող, գույք, մթերքներ և այլն, անհրաժեշտ է ստուգել ալք արժեքների քանակն ու վորակը: Յերբ վարչությունը արժեքները հանձնում է նոր ընդունող

անձնավորութիւններէ, կատարվում է նույնպիսի ստուգում, և այն ցուցակներէ տակ, վորոնցով արժեքները հանձնվում են, ստորագրում են թէ ընդունողը և թէ հանձնողը:

II Եճվեցեալի ցուցակագում (ձեզ Ն 1):

6. Յուրաքանչեւ հաշվետու տարւոյ վերջը կատարվում է կենդանի և մեռյալ ինվենտարի ցուցակադրում (վերստուգիչ հանձնաժողովի մասնակցութեամբ): Ցուցակադրման հետ միաժամանակ կատարվում է ինվենտարի գնահատում՝ ըստ իրական արժողութեան, սահմանվում է ամորտիզացիայի չափը և ցուցակից դուրս հանվում անպետք, կորած և փչացած ինվենտարը:

7. Կենդանի և մեռյալ ինվենտարի համար առանձին-առանձին ցուցակներ են կազմվում: Այդ յերկու կատեգորիաներն իրենց հերթին ստորաբաժանվում են հատուկ մասերի, նախած թէ ինվենտարը ինչ տեղ է դրանք (ընդմիակայանում, լաբորատորիայում և այլն): Ցուցակի տակ ստորագրում են թէ ստուգողը և թէ նրանք, վորոնց տնօրէնութեան տակ են գտնվում ցուցակադրված իրերը:

8. Ցուցակադրումների համար պահում են առանձին տետրակ կամ մատչան: Մատչանը կարող է ծառայել միջանի տարի:

III Դրամարկի մասշտաբ (ձեզ Ն 2):

9. Դրամարկի մատչանի մեջ համաձայն փաստաթղթերի դրի լին առնվում ստացված կամ ծախսված դրամական գումարները: Յուրաքանչեւը մուտքի և լիքի գումարի համար պետք է լինի համապատասխան փաստաթուղթ (անդրադրելի, հաշիվ, տեղեկանք, հաշվեդրժույկ և այլն):

10. Դրամ ստանալուց կամ վճարելուց հետո պետք է անմիջապէս դրի առնել դրամարկի մատչանում: Ամսի վերջին հաշվում են լիքի և մուտքի գումարները և դուրս է բերվում դրամի մնացորդը: Ընդհանրապէս դրամարկի մատչանը պետք է տանել այնպէս, վոր յուրաքանչեւը վայրկյան կարելի լինի պարզել դրամի մուտքը, լիքը և մնացորդը:

11. Դրամական դրածառութիւնների ժամանակ ամենակարեւոր նշանակութիւն ունեն փաստաթղթերը, վորոնք հաստատում են ստացված և տրված գումարների ճշտութիւնը, այդ պատճառով դրամական (ինչպէս նաեւ ուրիշ) փաստաթղթերը պետք է պահվեն խնամքով (փականքի տակ և այլն): Փաստաթղթերը պետք է կարվեն ժամանակաբարձական կարգով (մուտքի փաստաթղթերն առանձին, լիքիներ՝ առանձին):

12. Տարւոյ վերջին ստուգվում է դրամարկի կանխիկ դրամի քանակը և մնացորդը համեմատվում է դրամարկի մատչանի հետ:

IV Միքսի մասշտաբ (ձեզ Ն 3):

13. Այս մատչանում պահվում է ընկերութեան ունեցած բոլոր կերերի և մթերքների հաշիվը, դրանք են՝ ա) գնվող կերերը, թէ ընկերութեան կարիքների և թէ անդամներին մատակարարելու համար, բ) ցուցադրական հողատեսքերից ստացված մթերքները:

14. Այդ մատչանում ամեն մի տեսակի մթերքի համար առանձին հաշիվ է բացվում:

15. Ստացված մթերքները մատչանի մեջ են մտնում՝ համաձայն փաստաթղթերի՝ բեռնագրերի և հաշիվների (լիքի դրսից են գնված) և արձանագրութեանների (լիքի տնտեսութեան մեջ են արտադրված): Բաց թողնված մթերքներն սկզբում գրվում են բաց թողնելու որագրի մեջ, իսկ հե-

սոս դրանից եւ անցկացվում է մթերքի մատչանի մեջ: Որպէրի մեջամեն մի ձեռնարկման (խոզանոց, բեղմնակայան և այլն) համար բացվում է առանձին հաշիվ, վորտեղ ամեն անգամ գրվում է բաց թողնված մթերքը: Վորպեսզի որպէրից մթերքի մատչան անցկացնելու աշխատանքը հեշտանա, այն մթերքները, վորոնք վորոշ սահմանված չափով են բաց թողնվում, կարելի չէ մթերքի մատչանի մեջ անցկացնել մի անգամ ամսի վերջին:

Խնորքը ընկերութուններում պետք է պահել զրոյէկներ յուրաքանչիւր ձեռնարկման համար առանձին և նրանց մեջ գրել բաց թողնված մթերքները, ալլ կէտոայի իբրեւ կոնտրոլ մթերքները բաց թողնելու համար:

16. Վերադիր ծախսերը, ինչպես որին, մթերքների փոխադրութիւնը և այլ, գրում են ի հաշիվ այն մթերքի, վորի համար ծախսը կատարված է:

17. Խոտանված և փչացած մթերքները, այլ և չորանալու և թափվելու հետեանքով առաջացած պակասորդը լելք և գրվում մթերքի մատչանի համապատասխան հաշիվներում: արձանագրութիւններին հիման վրա:

18. Մթերքների լելքի և մուտքի ուղիղ գրված լինելն ստուգելու համար գրանցումները համեմատում են փաստաթղթերի հետ և պարզում մնացած մթերքների քանակը: Բաց թողնված կերերի քանակը, բացի դրանից, պետք է համապատասխանի սահմանված կերի նորմաներին:

19. Ստացված մթերքների ինքնարժեքը դուրս է բերվում՝ հաշվելով առքի գինը, վերադիր ծախսերը և ընդհանուր ծախսերը (վորոշ տոկոսային հարաբերութիւնը):

V Հաշիվներ Երմեարկների լելք ամեանների հետ:

20. Հաշիվներ կրիթհարների հետ. — Կոնտրոլ ընկերութիւն և արտելի, զուրդատնտեսական ընկերութիւն կամ միութիւն հաշիվային փոխհարաբերութիւն ժամանակ անհրաժեշտ է ունենալ հաշիվգրուէկներ արտելից, ընկերութիւնից կամ միութիւնից, վորտեղ պետք է գրել ընկերութիւն բոլոր ստացածներն ու վճարումները: Այս դեպքում հաշիվգրուէկը փոխաբերում է փաստաթղթին և հատուկ հաշիվմատչանի (ռեսկոնտրոլ):

21. Հաշիվներ պարտապանների հետ. — Յերը ընկերութիւնն իր անդամներին վարկով ուժեղ կերեր կամ սերմեր և մատակարարում, բաց թողնված մթերքների արժեքին համապատասխան ստացականներ և վերցնում նրանցից: Այդ ստացականներն անհրաժեշտ է առանձին գործի մեջ կարել: Այս դեպքում ստացականները կարող են փոխարինել անդամների անձնական հաշիվների հատուկ մատչանին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Յեթե կոնտրոլ ընկերութիւն պերսոնալն ունի ժամանակ և հնարավորութիւն, առանց գործին վնասելու, պարտքի գրանցումները հաշիվմատչանի (ռեսկոնտրոլ) մեջ անցկացնելու, ապա ալլ կարելի չէ խորհուրդ տալ միմիայն այն պայմանով, վոր այդ մատչանը մացնելու հետեանքով չեն վերանա հիշյալ հաշիվգրուէկները ու ստացականները: Հաշիվմատչանն ունի սովորական գրասենեկային գրքի ձև:

Բ. ԿՈՆՏՐՈՒԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

1. Հաշիվետու տարվա վերջին ընկերութիւնը կատարում է իր տնտեսութիւն ինվենտարիզացիան, այսինքն՝ պարզում է դրամի, մթերքների և

կերերի, գույքի և ինվենտարի (կենդանի և մեռյալ), ընկերութեան պարագիծ և ստանալիքների փաստական առկա քանակը: Դրա համար կատարվում են հետևյալ աշխատանքը.—ա) գույքի և ինվենտարի գնահատումն ըստ իրական արժեքի, բ) կերերի և մթերքների գնահատումն ըստ ինքնարժեքի, գ) վերոշվում են հուսալի պարտքերը:

2. Զուգընթացաբար պարզվում է նաև հետևյալը.—ա) դրամի, մթերքների, գույքի և ինվենտարի պակասորդները և դրանց գումարը. բ) պարզվում է կասկածելի և անհույս պարտքերի գումարը. գ) վերոշվում է գույքի և ինվենտարի հանգցման գումարը:

3. Պակասող և ցուցակից դուրս հանվող նյութերի և իրերի համար կազմվում են համապատասխան արձանագրութիւններ:

4. Յեթե ընկերութիւնը չկարողանա կազմել տարեկան հաշվետվութիւն դրամարկղի և մթերքների մատուցանելի հիման վրա, ալդ դեպքում պետք է կազմի նաաուրնի հաշվեկշիռ փաստական՝ առկա միջոցների քանակն ստուգելիս ստացվող ավյալների հիման վրա (նաաուրնի հաշվեկշիռի ձևը տես յերես 26):

5 Իսկ ավելի մանրամասն թվական հաշվետվութիւն կազմելիս պետք է դրամարկղի և մթերքների մատուցանելից ջաղվածքներ անելով պարզել ընկերութեան չուրաքանչյուր ձեռնարկման մուտքն ու յեկքն առանձին, ալ և դուրս բերել ընկերութեան հաշվեկշիռը: Այդպիսի հաշվետվութիւն կազմելիս, բացի ջաղվածքներից, անհրաժեշտ է ունենալ տարվա ցկզրի հաշվեկշիռը և ինվենտարի ցուցակները: Հաշվետվութեան ֆաացած բոլոր հաշիվները դուրս կբերվեն ամփոփված նյութի հիման վրա:

6. Հիշյալ մատուցանելից ջաղվածքները կատարվում են ըստ հոդվածների, վորոնք ցույց են տրված տարեկան հաշվետվութեան համապատասխան հաշիվներում (դրամարկղի հաշվում և մթերքների հաշվում):



ԸՆԿԵՐՈՒՄՅԱՑ ԶԱՐԻԿԱՑ ԽԱՇՎԵՎՈՒՄՅԱՑ ԾԵՎԸ

ՇԿՏԻՎ

Հաշվեկշիռ տարեսկզբին

ՊԸՍՍԻՎ

Կանխիկ դրամ	80	Փոխառություն վարկ. ընկ-ից	400
Կաթ	—	Կաթնարտելի պարտքը . .	125
Կահույք	480	Ընդամենը . . .	525
Կենդանի ինվենտար . . .	510		
Նյութեր և կերեր	120	Դրամագլուխներ՝	
Ընկերութիւն տնտեսները .	—	Մուտքի վճարի	25
	—	Փայտվճարի	340
	—	Հարոտատու. գործիքներ	300
	—	Ընդամենը . . .	685
Հաշվեկշիռ	1180	Հաշվեկշիռ	1180

ՄՈՒՏԷ

Դրամադրդի հաշիվ

ՅԵԼՔ

Մնացել եր նախորդ տար- վանից	80	Մասված և տարվա ընթացք. Գումի կառուցման համար . .	512
Ստացված և տարվա ըն- թացքում՝		Խոզանոցի հիմնական վերա- շինութիւն համար . . .	88
Արտելից՝ կոնսրուկտիւստե- տի ռոճիկի համար . . .	840	Գնված և լարորատու. գոր- ծիքներ	—
Անդամավճարներ և փախ- վճարներ	60	Գնված և կերեր	380
Կովերի զուգավորման վարձ 25 գլ. տոննայի գոճիկների վաճառքից	460	» ինվենտար	20
Խաղաղած կերերի և ալլ մթերքների վաճառքից	450	Վճարված և կերերի փոխա- դրութիւն համար . . .	20
Պարտք (իբրև ապահով ստաց- ված կերեր)	—	Մասված և խոզանոցի վե- րանորոգութիւն համար	10
Փոխառություն վարկ. ընկ-ից	150	Գումի վերանորոգութիւն հա- մար	8
» գյուղատ. բանկից	500	Վճարված և վարկ. ընկե- րութիւնն ի հաշիվ	200
Մեքենաների վարձագին .	—	Վճարված և ռոճիկ կոնսրու- կտիստեներին	820
		Վճարված և տավարապահին ռոճիկ՝ ի հաշիվ խոզանոցի	180
		» » բեղմնակալանի	180
		Դրամահեկային և փոստային ծախսեր	20
		Շենքի կապավճար	—
		Ալլ տնտեսական ծախսեր .	20
		Ընդամենը	2468
Բոլորը	2540	Մնում և կանխիկ դրամ . .	72
		Բոլորը	2540

ՄՈՒՏ-Բ

Հաշիվ մթերքների և կերերի

ՑԵԼ-Բ

Մնում եր անցյալ տարվա- նից	120	Բաց ե թողնված ընթացիք տարում	—
Գնված ե տարվա ընթացքում՝		Անդամներին վարկով	—
Կանխիկ դրամով	390	Խողանոցին	260
Վարկով՝ Միությունից	—	Բեղմնակալանին	240
Վճարված ե կերերի փո- խադրության համար	20	Ընդամենը	500
Մուտք փորձադաշտից	—	Դուրս ե գրված իբրե փշա- ցած ե թափված	8
	—	Մնում ե տարվա վերջին	22
Բոլորը	530	Բոլորը	530

ՄՈՒՏ-Բ

Հաշիվ գույքի և ինվենտարի

ՑԵԼ-Բ

Մնում եր նախորդ տար- վանից	480	Հաշվից դուրս ե հանված՝	
Ձեռք ե ընդված ընթացիկ տարում՝		Բեղմնակալանի անպե- քացած ինվենտարը	4
Կառուցված ե զոմ	512	Գրասենյակի անպե- քացած ինվենտարը	2
Խողանոցի հիմնական	—	Հաղորդատրիայի տն- այնք ինվենտարը	3
Վերանորոգություն	88	Հաշվից դուրս ե հանված ինվենտարի հանգումը	
Այլ ինվենտար	20	1) Բեղմնակալանի	22
		2) Անասնաբուծարանի	20
		3) Գրասենյակի և լաբ- որատորիայի	89
		Ընդամենը	90
		Մնում ե առ 1-ն հունվարի 1927 թ.	1010
		Բոլորը	1100
Բոլորը	1100		

ՄԱՌՏՔ

Հաշիվ կենդանի ինվենտարի

ՅԵԼՔ

Մնում եր նախորդ տար- վանից՝		Հաշվից դուրս ե հանված Սատկած կենդանի ին- վենտարի արժեքը . . .	—
ա) Յուլիեր	350	Հաշվից դուրս ե գրված կենդանիների արժեքը հանդցնելու համար՝	
բ) Վարադներ և մերուռն- ներ	160	Բեղմնակալանի	—
Ֆնված են վարադներ .	—	Անասնաբուժականի . . .	—
» ցուլեր	—	Մնում ե տարվա վերջին . .	510
Բեղմնակալանում թող- նված սերունդը	—		
Բոլորը	510	Բոլորը	510

ԺԱՄՅ

Հաշիվ բեղմնակալանի

ՅԵԿԱՄԱՌՏ

Մնում եր կեր անցյալ տար- վանից	—	Ստացված ե բեղմնավորման վարձ	460
Ծախսված ե ընթացիկ տա- րում՝		Մնում ե կեր տարվա վերջին	—
Կերեր	240		
Ռոճիկ տավարապահին .	180		
Պոմի վերանորոգում .	8		
Շենքի կապալավճար .	—		
Բեղմնակալանի ինվեն- տարի հանդուժ	22		
Ոգուտ բեղմնակալանից	10		
Բոլորը	460	Բոլորը	460

ՃԱԽՍ		Հաշիվ խողարուծ տրանի	ՏԵԿԱՄՈՒՏ
Մնում եր նախորդ տար- վանից	—	Դուլացել և 450 գոճիների վաճառքից	450
Ծախսված և հաշվետու տա- րում՝		Բուծարանում թողնված մե- րունների	—
Կերեր	260	Մնում և կեր տարվա վերջին	—
Ռոճիկ	180	Վնաս բուծարանից	20
Խոզանոցի վերանորո- գում	10		
Շենքի կապալավճար .	—		
Ինվենտարի հանգումն .	20		
Վարագների արժեքի հանգումն	—		
Բոլորը	470	Բոլորը	470

ՃԱԽՍ		Հաշիվ ցուցադրական ցանքերի	ՏԵԿԱՄՈՒՏ
Ծախսեր՝ անցյալ տարվանից մնացած	—	Հավաքված և ընթացիկ տա- րում՝	—
Ռոճիկ և այլ ծախսեր . . .	—		—
Սերմեր	—		—
Ծախսեր՝ կատարված ըն- թացիկ տարում՝		Ընդամենը	—
Սերմեր	—	Ծախսեր, վորոնք անցել են գալիք տարվան՝	—
Ռոճիկ	—	Սերմեր	—
Այլ ծախսեր	—	Աշխատանք և այլ ծախ- սեր	—
		Վնաս ցանքերից	—
Ընդամենը	—		
Ոգուտ	—		
Բոլորը	—	Բոլորը	—

ՎՃԱՐՎԱԾ Ե ՀԱՂԻՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՆՑՎԱԾ Ե

Վճարված ե ընթացրկ տա- րում ի հաշիվ փոխա- ռութիւնների	200	Պարտք-փոխառութիւն վար- կային ընկերութեանը անցյալ տարվանից . . .	400
Մնում ե պարտք՝ վարկային ընկերութեանը	350	Ստացված ե փոխառութիւն ընթացիկ տարում . . .	150
Բոլորը	550	Բոլորը . . .	550


ՎՃԱՐՎԱԾ Ե ՀԱՂԻՎ ԿԱԹՆԱՐԱՌԵԼԻ ՍՏՆՑՎԱԾ Ե

Վճարված ե արտելին . . .	—	Մնում եր պարտք արտելին	125
Մնում ե պարտք տարվա վերջին	125	Նորից փոխարինարար վեր- ցված ե	—
Բոլորը . . .	125	Բոլորը . . .	125


ՎՆՈՄՆԵՐ ՀԱՂԻՎ ԵԿԿԱՄՈՒՄ Ե ԺԱԽՍՆԵՐԻ ՏԵԿՆՈՒՄՆԵՐ

Ընդհանուր ծախսեր՝		Ստացված ե կաթնարտելից՝	
Ռոճիկ կոնտրոլ-ասիս- տներին	820	Նպաստ՝ կոնտրոլ-ասիս- տներին պահելու հա- մար	840
Նյութեր տնային զին- համար	—	Ողուտ բեղմնակալանից	10
Փոստային ե գրասենյա- կային ծախսեր . . .	20	»	—
Շենքի կապտավճար .	—	Ընդամենը . . .	850
Մշուտ տնտես. ծախսեր	20	Ընկերութեան ֆնասը . . .	86
Խոտանված ե փչացած մթերքներ	8		
Անպետքացած ինվետար	9		
Լաբորատորիայի ին- վետարի հանգումն .	39		
Ընդամենը . . .	916		
Վնաս բուծարանից	20		
Բոլորը . . .	936	Բոլորը . . .	936

ՎԵՐՈՒՆԲԱՆՈՒՄ Ե ՀԱՂԻՎ ԴՐԱՄԱՂՈՒԼՆԵՐԻ ՄՏՈՑՎԱԾ Ե

Մնում և տարեվերջին՝		Մնում և անցյալ տարեվերջին՝	
Մուտքի վճարներ . . .	40	Մուտքի վճար	25
Փայավճարներ	385	Փայավճարներ	340
Նպաստ՝ լարորատոր . .	300	Նպաստ՝ լարորատոր . .	300
			
Ընդամենը . . .	725	Ընդամենը . . .	665
		Ստացված և ընթացիկ տարում՝	
Բոլորը . . .	725	Մուտքի վճար	15
		Փայավճար	45
		Ընդամենը . . .	60
		Բոլորը . . .	725

ՆԿՏԻՎ ՀԱՂՎԵԿՂԻՈՒ ԿՈՒՆԻՎԱՐԻ 1927 թ. ՊԼՍՍԻՎ

Կանխիկ դրամ	72	Փոխառություն վարկ. ընկ. ից	850
» մթերքներ	22	» գյուղ. բանկից	500
Ինվենտար և գույք	1010	Պարտք արտելին	125
Կենդանի ինվենտար . . .	510		975
Ցուցադրական ցանքեր . .	—	Դրամապլուխներ՝	
Վնաս	86	Հիմնական	40
		Փայավճար	385
		Հատուկ	300
Հաշվեկշիռ . . .	1700	Ընդամենը . . .	725
		Հաշվեկշիռ . . .	1700

Պարտքյուն Թ՝

Վերստուգելի հանձնաժողովի յեզրակացությունը.

Ձեզ Մ 1. Ինվենտարի ցուցակ.

Ա. Ինվենտար

Առ ըստ կարգի	Ա Ն Ո Ւ Ն Ը	Մնացել էր տարվա սկզբին			Նոր ստացվել է			Մնում է տարվա վերջին			Դուրս է գրվ. վոդ- պես վնաս և հանգ.			Մանրագրում
		Քան.	Գինը	Գում.	Քան.	Գինը	Գում.	Քան.	Գինը	Գում.	Քան.	Գինը	Գում.	

Ձեզ Ս 2. Դրամարկի մատյան.

ՄԱՌՏԻՔ

Հաշիվ գրամարկի

ՅԵԼՔ

Ամիս և քիվ Առ ըստ տա- րի	Ումից է ինչու համար և ստացված գումը	Գումար		Ընդամե- նը մեկ ամսում	Ամիս և քիվ Առ ըստ տա- րի	Ումից է ինչու համար և ստացված գումը	Գումար		Ընդամե- նը մեկ ամսում
		Ռուբ.	Կ.				Ռուբ.	Կ.	
	Փոխանցում					Փոխանցում			

Ձեզ Ս 3. Մրհրհմերի մատյան.

ՄԱՌՏԻՔ

Հաշիվ

ՅԵԼՔ

Տարի, ամիս և քիվ Առ ըստ տա- րի	Ումից է ինչու համար և ստացված	Քանակը		Գումարը	Տարի, ամիս և քիվ Առ ըստ տա- րի	Ումից է ինչու համար և ստացված	Քանակը		Գումարը
		Հատ.	Փաշ.				Հատ.	Փաշ.	
	Փոխանցում					Փոխանցում			

Նաստուրնի հաշվեկշիռ առ 1-ն հունվարի 1927 թ.
Натурный баланс на 1-ое января 1927 г.

№ №	Միջոցների կատեգորիաները Категорий средств	Քանակը Количество		Արժեքը Стоимость	Պահվել СУМА	Ծանոթութ. Примеч.
		Համարացված Счетом	Քաշով Весом			
	ԱԿՏԻՎ — АКТИВ					
1	Առ 1-ն հունվարի 1927 թ. կանխիկ կար՝ В наличности на 1/1 1927 г. оказалось: Դրամադրված — կանխիկ դրամ Касса — наличных денег	—	—	—	72	
2	Մթերքներ և կերեր — համաձայն հաստից ցուցակի Продукты и корма — согласно особой описи	—	—	—	22	
3	Շենքեր — Строеия: ա) դոմ — скотный двор բ) խոզանոց — свиновод	1 1	— —	490 110	490 110	
4	Ընդամենը — Итого . .	—	—	—	600	
	Ինվենտար — Инвентарь:					
	ա) լաբորատորիայի (առանձն. ցուց.) а) лабораторий (по особ. описи)	—	—	—	351	
	բ) գրասենյակի (առանձին ցուց.) б) конторы (по особ. описи)	—	—	—	39	
	գ) գոմի և խոզանոցի (առանձն. ցուց.) в) скотного двора и свинарника (по особ. описи)	—	—	—	20	
	Ընդամենը — Итого . .	—	—	—	410	
5	Դրամադրված — Библиотека: Կենդանի ինվենտար — Жив. инвент.: ա) վարադներ а) борозов բ) ծոգեր (մերուկներ) б) свиней գ) զոհեր в) поросят դ) ցուլ «А» г) бык «А» է) ցուլ «В» д) бык «В»	102 3 3 1 1 1 1	— — — — — — —	— 50 35 16 130 109	150 105 16 130 109	
	Ընդամենը — Итого . .	9	—	—	510	

ԿԹԻ ԱՆԱՍՆԱՐՈՒԾԱԿԱՆ ԿՈՆՏՐՈՒՍԵԿՅԱՆՅԻ

1. Նպատակ ունենալով միացյալ ուժերով ստեղծելու և ընարելու արդյունավետ կենդանիներ՝ ճիշտ կերպով վորոշելով յուրաքանչյուր կողմի արտադրական ընդունակություններն՝ ըստ կաթի քանակի, նրա ճարպի 10-ի և կերողագործման, ընկերության անդամներից կազմվում և կթի ամսամարումնակամ կոմսրոյ-սեկցիա

2. Հիշյալ (1 կետ) նպատակն իրագործելու համար սեկցիան

ընկերության միջոցով կարող է՝

ա) Կազմակերպել կանոնավոր կոնտրոլ՝ սեկցիայի անդամների անասնապահության և կաթնատնտեսության վերաբերյալ, հրավերելով անդամների հաշվին կոնտրոլ-ասիստենտ՝ կաթնատնտեսականների ու կաթնատնտեսության լ'լքն ու մուտքը հաշվառման յանթարկելու համար:

բ) Կատարել կաթնատու և տոհմացու տավարի ընտրության ու խտատում, պահել տոհմական արտադրողներ սեկցիայի անդամների հաշվով և իրենց անտնտեսությաններում ռզտագործելու համար պահել տոհմական դիրք և քաղվածքներ տալ նրա միջից:

գ) Մտցնել անասունների կերակրման, խնամքի և պահվածքի ալլ և կաթնատնտեսության ավելի կանոնավոր ձևեր:

3. Սեկցիայի անդամ են համարվում ընկերության այն անդամները, վորոնք դիմում են տվիլ սեկցիային՝ անդամագրվելու համար:

4. Սեկցիայի յուրաքանչյուր անդամ պարտավոր է.—

ա) Թույլ տալ կոնտրոլ-ասիստենտին, վոր հետեի իր կթի անասունների և մատղաշների պահվածքին, խնամքին և կերակրմանը և կաթնատնտեսությանը, կշռել տրվող կերն ու կիթերը և վորոշել կաթի ճարպի 10-ը:

բ) Մտցնել իր անտնտեսության անասնապահության և կաթնատնտեսության մեջ կոնտրոլ-ասիստենտի խորհուրդ տված և սեկցիայի կողմից անհրաժեշտ ճանաչված բարելավումները:

գ) Կատարել անասնապահության վերաբերյալ ճիշտ պրանցումներ՝ ընկերության մեջ ընդունված ձևերով:

դ) Տալ կոնտրոլ-ասիստենտին լրիվ ապրուստ իր անտնտեսության մեջ աշխատելու ժամանակ, և վճարել այն բոլոր ծախսերը, վորոնք կապված են սեկցիայի գործունեության հետ:

յ) Ընդհանրապես յանթարկվել սեկցիայի բոլոր վճռողականերին և հրահանգներին:

6. Սեկցիայի որդաններն են՝

ա) Սեկցիաների անդամների ընդհանուր ժողովը և

բ) Ընկերության վարչութիւնը:

6. Սեկցիայի անդամների ընդհանուր ժողովի անելիքներն են՝

ա) Սեկցիայի աշխատանքների մասին հրահանգներ քննել և ընդունելը՝ ընկերության վարչութիւնի միջոցով ընկերության ընդհանուր ժողովին և հաստատութիւնն ներկայացնելու համար:

բ) Սեկցիայի աշխատանքների վերաբերյալ պլանների, նախադաշինների և հաշվետվութիւնների քննութիւնն ու հաստատումը:

գ) Վերոյի, թե սեկցիայի անդամներն ի՞նչ կարգով մուծումներ պետք և անեն կոնտրոլ-աշխատանքը վարելու ծախսերի համար:

դ) Սեկցիայի անդամներին հեռացնել և վերնդառնելը:

յ) Ընդհանրապես քննել սեկցիայի աշխատանքի հետ կապված բոլոր հարցերը:

7. Ընդհանուր ժողովին դումարելու և վարելու կարգը սահմանվում և համապատասխան ընկերության նախադրութիւնի ընդհանուր ժողովներին վերաբերող §5-ներին:

8. Սեկցիայի գործադիր որդանն և հանդիսանում

..... ընկերության վարչութիւնը, ըստ վրում նրա անդամներից մեկը կարող և նշանակվել սեկցիայի աշխատանքներն ավելի մոտիկից վարելու համար:

9. Սեկցիայի ամբողջ աշխատանքը տարվում և ի հաշիվ հատուկ միջոցների, վորոնք կազմվում են անդամների մուծումներից, հատուկ և այլ նպաստներից, նվիրատվութիւններից, փոխառութիւններից, վորոնք կնքված են ընկերության կանոնադրութիւնն համաձայն և այլ մուտքերից:

10. Սեկցիայի գործունեութիւնը յանթակա յի

..... ընկերության Վերատուգիչ Հանձնաժողովին կոնտրոլին՝ ընդհանուր հիմունքներով:

11. Սեկցիայի գործունեութիւնը դադարում և՝

ա) Նրա անդամների ընդհանուր ժողովի վորոշմամբ.

բ) Ընկերության ընդհանուր ժողովի վորոշմամբ:

12. Թե առաջին և թե յերկրորդ դեպքում սեկցիան լիկվիդացիայի յանթարկվելիս նրա հատուկ միջոցները հանձնվում են կոնտրոլ-ընկերութիւնը, յեթե այդպիսին կկազմակերպեն լիկվիդացիայի յանթարկվող սեկցիաների անդամները:

ԿԵՐԱԿՐՄԱՆ ՆՈՐՄԱՆԵՐ

Нормы кормления

1. Կենսապահ կերի նորմաները

Нормы поддерживающего корма

Կովի կենդանի զաւը կիլոգրամներով Живой вес коровы в килограммах		Կերի միավորների քանակը (կեր.) Количество кормовых единиц. (кгр.)	Սպիտակուցի քանակը ամբողջ կենսապահ կերի մեջ (գրամներով) Количество белка во всем поддерживающем корме в граммах
—ից—մինչև— от—до	Միջին հաշվով в среднем		
Մինչև—До 250	200	2,5	100
250—349	300	3,0	150
350—449	400	3,5	200
450—549	500	4,0	250
550—649	600	4,5	300
650-ից վեր—сверх	700	5,0	350

Հղիության առաջին շրջանում (մինչև 6-րդ ամիսը) հորթի համար որոշում է 0,10 կերի միավոր

» վերջին » » 6—9 » » » 0,25 » »

На телка в первый период стельности (до 6 мес.) дается 0,10 корм. един

» » во второй » » (от 6—9 мес.) » 0,25 » »

2. Արդյունավետ կերի նորմաներ

Нормы продуктивного корма

Կաթի հարույրի %-ը Процентное содержание жира в молоке		Քանի կեր. կաթ. նստացվում 1 արդ. կերի միավոր է դիմաց Кл. молока на 1 продукт, кормовую един.	Սպիտակուցի քանակը 1 կեր. կաթի համար գրամներով Граммов белков на кг. молока	Արդյուն. կերի միավորների քանակը 1 կգ. կաթի համար Продуктивных корм. единиц ва 1 кг. молока
Ճիշտ Точно	—ից մինչև— от—до			
2,89	Մինչև—до 3,00	3,0	42 (41,7)	0,833
3,08	3,00—3,24	2,9	43 (43,1)	0,845
3,29	3,25—3,49	2,8	45 (44,6)	0,857
3,51	3,50—3,71	2,7	46 (46,3)	0,870
3,74	3,75—3,99	2,6	48 (48,1)	0,885
4,00	4,00—4,24	2,5	50 (50,0)	0,400
4,28	4,25—4,54	2,4	52 (52,1)	0,417
4,58	4,55—4,89	2,3	54 (54,1)	0,435
4,91	4,90—5,24	2,2	57 (56,8)	0,455
5,27	5,25—5,64	2,1	60 (59,5)	0,476
5,67	5,65—6,09	2,0	63 (62,5)	0,500
6,11	6,10—6,54	1,9	66 (65,8)	0,528
6,59	6,55—6,99	1,8	69 (69,4)	0,556
7,14	7,00 և ավելի և ավելի и выше	1,7	73 (73,5)	0,588

ՍԿԱՆԴԻՆԱՎՅԱՆ ԿԵՐԻ ՄԻՆԵՐԱՆԵՐԸ

Скандиновские кормовые единицы

